

## Ահարոնեան Արա

Ֆրանսահայ առաջնակարգ ձեռներեց, բարերար եւ համայնքային առաջնորդ Արա Ահարոնեանը ծնած է Պէյրուի 1956-ին:

Ահարոնեանը արժէքաւոր մարդ մըն է ո՛չ միայն իր ունեցուածքին կամ գործածին համար, այլ իր անձին՝ բարի, հոգատար, խոնարհ եւ հաւատարիմ քրիստոնէայ մը ըլլալուն համար, ով կ'ապրի ըստ «Մի՛ փնտռէք պատուոյ տեղերը խնճոյքներու ատեն» եւ «Երբ ողորմութիւն կու տաս, ձախ ձեռքդ թող չգիտնայ՝ աջ ձեռքիդ ըրածը» ուսմունքներուն:



1979-ին, [Պէյրուի ամերիկեան համալսարանէն](#) տնտեսագիտութեան պսակաւոր արուեստից աստիճան ստանալէ ետք, Ահարոնեանը տեղափոխուած է Ֆրանսա: Ան 1981-ին շրջանաւարտ եղած է «[INSEAD](#)»-էն՝ գործարարութեան կառավարման մագիստրոսական արուեստից աստիճանով: 1988-ին, ի թիւս այլ ընկերութիւններու, ան հիմնած է «[Francare](#)»-ը, որ դարձած է յառաջատար ընկերութիւն մը եւրոպական հանքային, քարիւղային եւ վառելանիւթային արդիւնաբերութեան սարքաւորումներու, ինչպէս նաեւ բժշկական արհեստագիտութեանց ասպարէզէն ներս՝ լայնածաւալ գործունէութիւն ծաւալելով Ափրիկէի, Միջին Արեւելքի եւ Հարաւարեւելեան Ասիոյ մէջ:

Ահարոնեանը ֆրանսական բանակի նախկին սպայ, Լիբանանի հայ համայնքային գործիչ [Գասպար Մենաքի](#) թոռն է: Իր նշանակալից ժառանգութեան ի պատիւ՝ սրբազան քահանայապետ Յովհաննէս Պօղոս Բ. Արային շնորհած է Սուրբ Գրիգոր Մեծի միաբանութեան պապական ասպետի տիտղոսը:

Ըլլալով ազնուութեան, կարեկցանքի եւ գործունէայ մարդ մը՝ Ահարոնեանը նշանակալի դեր խաղացած է բարեգործութեան եւ համայնքային ծառայութեան մէջ: Ան ծառայած է իբրեւ [ՀԲԸՄ Ֆրանսայի](#) ընդհանուր քարտուղար եւ գործուն անդամ՝ նպաստելով «Հայկական դաշինք հիմնադրամ»-ի գործունէութեան: Վերջինս բարեգործական կազմակերպութիւն մըն է, որ կը կեդրոնանայ Հայաստանի մէջ մանուկներու պաշտպանութեան եւ խոցելի տարեցներու աջակցութեան վրայ: Անկէ զատ, ան կը հանդիսանայ Ֆրանսայի հայ կաթողիկէ Սուրբ Խաչ տաճարի [վերանորոգման](#) հիմնադրամի նախագահն ու գլխաւոր բարերարը:

Իրեն զօրավիզ կանգնող կնոջը՝ Միլուային հետ միասին, ով Սուտանի երբեմնի բարերար Կարո Գրիգորեանի դուստրն է, հաստատակամ է՝ պահպանելու իրենց հարուստ աննիւթական ժառանգութիւնը եւ զայն փոխանցելու ապագայ սերունդներուն: Չոյզը օրհնուած է երկու զաւակներով՝ Կարին, ով փաստաբան է, եւ Լէոնը, ով ճարտարագէտ է: Անոնք Ահարոնեանի հիմնած զանազան ձեռնարկութիւններուն սիւներն ու ապագան են:

Աղբիւրներ, յղումներ.

<https://www.paris.fr/pages/la-cathedrale-sainte-croix-des-armeniens-retrouve-sa-splendeur-6901>

<https://www.insead.edu/>

<https://francare.com/>